պում են մեր լրագիրները չատ անգամ լռել զանազան մանրամասնութիւնների մասին։

Մենք կուզենայինք կարծել, որ Էջմիածնի այժմեան կառավարիչները լաւ ըմբռնած պէտք է լինեն լրագրութեան նշանակութիւնը մեր դարում։ Այս իսկ պատճառով մենք չենք կարող չը յայտնել մեր զարմանքը, որ այսպիսի ծանր ազգային-հասարակական հարցի մէջ նոքա միայն յամառ լռութեամբ են անցնում հաղորդած լուրերը և նրանց հետ կապված ուրիշ տեղեկութիւնները։

Թոյլ տուէք, ուրեմն, յարգելի պ. խմբագիր, ձեր լրագրի միջոցով դիմել ում հարկն է և խնդրել՝ այս երկու երեք խօսքը չը թողնել առանց ուշադրութեան և քանի կարելի է շուտով հաղորդել այստեղի հայ լրագիրներին պաշտօնական և ճիշդ տեղեկութիւն այն բոլոր լուրերի մասին, որոնք տարածվել են լրագրութեան մէջ Նորին Արքութեան հիւանդութեան պատճառով։

Ս. Մելիք-Մեհրաբեանց

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

Խնդրում ենք մեր թէ Թիֆլիսի և թէ գաւառացի բաժանորդներին, որոնք իրանց հասցէն փոխում են, ուղարկել խմբագրութեանը 21 կոպէկ, փողով կամ փօստի մարկաներով։ Ուրեմն իւրաքանչիւր անգամ ադրէսը փոխելու համար պէտք է ուղարկել երեք հատ 7 կոպէկանոց մարկա։

—

Թիֆլիսաբնակ պ. Կարապետ Եղիազարեանց ուղարկել է մեր խմբագրութեանը 10 բուբլ յօգուտ Վանի կողմերի երկրաշարժից վնասված գիւղերի։

—

Լրագիրները հաղորդում են որ ժողովրդական լուսաւորութեան մինիստր բարօն Նիկոլայ այս օրերս այցելեց Կազանի համալսարանը և յայտ յայտնեց որ կրկին մտցնվելու է շուտով 1863 թ. համալսարանական կանոնադրութիւնը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹՈՒՐՔԻԱ

Կ. Պոլսից „Polit. Corresp.“ լրագրին հաղորդում են հետևեալը Միհատ-փաշայի մասին։ Ցարածված լուրերը Միհատ-փաշայի մասին միմեանց չափազանց հակասում են։ Մի կողմից պատմում են, որ նրան վերջ ի վերջոյ մեծ վիզիր կը նշանակեն, իսկ միւս կողմից հաւատացնում են, որ նրան մահուան պատժի կենթարկեն։ Այդ երկու լուրերն էլ կատարելապէս սխալ են, թէպէտ նրանց ապացուցանելու համար շատ բան կարելի է ասել։ Միհատ-փաշա առաջին յուցմունքի ժամանակ մեծ աջողութիւն ունեցաւ և կարողացաւ ազդել ոչ թէ միայն դատաւորների, այլ և սուլթանի վրա, որը գաղտնի լսում էր նրա ցուցմունքները։ Մերժելով իր ուղղակի մասնակցութիւնը Աբդուլ-Ազիզի սպանմանը և մեղադրելով Հուսէյն-Աւնի-փաշային, որին չափազանց մեծ իշխանութիւն էր տուած, մինչդեռ սուլթանը պէտք է լինի զօրքերի մշտական գլխաւոր հրամանատարը, Միտհատ-փաշա պաշտպանում էր Աբդուլ-Ազիզի սպանութիւնը իբրև քաղաքական անհրաժեշտ գործ, որի առաջը չէր կարելի առնել, քանի որ Աբդուլ-Ազիզ գահընկէց էր արված։ Իսկ Աբդուլ-Ազիզին գահընկէց անելը նա արդարացնում էր այն հանգամանքով, որ հանգուցեալ սուլթանը ֆինանսական դեղծումներով երկիրը կորստեան հասցրեց, կամենում էր Թիւրքիան Ռուսաստանի գիրկը գցել և բացի այդ կրօնական օրէնքի հակառակ նա կամենում էր փոփոխել Թիւրքաց ժառանգական օրէնքը։ Միտհատ-փաշա այնքան խելացի էր, որ այս վերջին հանգամանքին առանձին նշանակութիւն տուեց, որովհետև, եթէ Աբդուլ-Ազիզի այդ մտադրութիւնը իրագործվէր, այժմեան սուլթանը չէր բարձրանայ Թիւրքաց գահը։ Վերջապէս նա ապացուցեց, որ ժառանգական օրէնքի փոփոխութիւնը, եթէ դրա առաջը չառնվէր Աբդուլ-Ազիզին գահընկէց անելով, ներքին պատերազմի պատճառ կը դառնար։ Այդպիսի ցուցմունքից յետոյ սուլթանի հրամանով Միհատ-փաշայի հետ սկսեցին աւելի լաւ վարվել։ Սուլթանը նրան ընծայեց երկու թանգագին վերարկուներ։ Սկզբից այդ ընծան օտարոտի է երևում, բայց պէտք է յիշել, որ մի քանի ժամանակ առաջ իւրաքանչիւր նոր դեսպանին մի վերարկու ընծայ էր տրվում, որի մէջ նա առաջին անգամ ներկայանում էր սուլթանին։ Միհատ-փաշա թոյլատրութիւն ստացաւ ազատ գրօանել Եալդիզլի-կէօշկի այգիի մէջ և, չը նայելով տաք եղանակին, օգուտ է քաղում այդ թոյլատրութենից և սուլթանի ընծայած վերարկուն հագած՝ գրօսնում է։ Նրա հետ սկսեցին մինչ այն ասիճան լաւ վարվել, որ մի ժամանակ լուր տարածվեցաւ, թէ նրան թոյլ է տուած ապրել իր պալատի մէջ։ Հաստատ յայտնի է, որ թէ նա և թէ միւս մեղադրվածները կը դատվեն բաց դատարանում։ Արտաքոյ կարգի դատարան նշանակելու մտքից հրաժարվել են և գործը սովորական դատաստանի կը յանձնվի։ Այդ հանգամանքը ձեռնտու է թէ Միհատ-փաշային և թէ այլ մեղադրվածներին, որովհետև անկարելի է ապացուցանել նրանց ուղղակի մասնակցութիւնը Աբդուլ-Ազիզի սպանմանը։ Մի և նոյն ժամանակ մտադրութիւն կայ Միհատ-փաշային անվնաս դարձնել, այսինքն առաջ նրան աքսորել և այնուհետև մի որ և է հեռաւոր տեղ նահանգապետ նշանակել։

ԱՆԳԼԻԱ

Իրլանդական գլխաւոր քարտուղար միստր Ֆոբսեր վերադարձաւ Իրլանդիայից և նրա պարլամենտական բացատրութիւնները իրլանդական գործերի դրութեան մասին հանգստացնող բնաւորութիւն ունեն։ Նա կարդաց համայնքների ժողովի մէջ վարչական անձանցը ուղղած իր շրջաբերական կանոնները, որոնցով նա հրահանգում է ըզգուշանալ զէնք գործածելուց, բայց պընդում է, որ օրէնքները խստութեամբ իրագործվեն։ Լրագիրները հաւանում են այդ շրջաբերականների բովանդակութիւնը և ձևը։ Գլադստոն յայտնեց, որ նա ցանկանում է շտապեցնել կալուածական օրինագծի քննութիւնը, որի համար հաղարից աւելի խմբագրութիւններ են առաջարկված։ Մինիստրի բարեկամները յոյս առան հարիւրից աւելի առաջարկութիւններ կալուածական օրինագծի վերաբերութեամբ, որպէս զի հեշտացնեն նրա քննութիւնը։

Պարնելի ազդեցութիւնը Իրլանդիայի մէջ ներկայումս կարելի է փոքրացած համարել։ 1867 թուականից Ֆենիները այդ երկրի մէջ մեծ ազդեցութիւն են ձեռք բերել։ Իրլանդա-ամերիկական կուսակցութեան արմատական տարրերը յաղթում են և մարդիկ են գտնում իրանց որոշած յանցանքները իրագործելու համար։ Նիւ-Եօրկի մէջ հրատարակվող Ֆենիների առաջնորդի լրագիրը հետևեալ նկատողութիւնն է անում։ „Մենք արեան տեղ արիւն ենք պահանջում։ Անգլիական կառավարութեան անդամներից երկուսը մահուան են դատապարտված և մենք ուրախութեամբ կընդունենք այն հեռագիրը, որ մեզ կը հաղորդէ նրանց սպանման լուրը“։ Նոյն լրագիրը մի այլ յօդուածով հրաւիրում է իրլանդացիներին աներ ճայթեցնել և վերջը սպառնում է, թէ իրլանդացի նաւավարները կը ճայթեցնեն անգլիական նաւերը, ինչպէս նրանք ճայթեցրին „Doterel“ նաւը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ֆրանսիական լրագիրներում լուր տպվեցաւ Էմիլ Զոլաի «Les Romanciers naturalistes» վերնագրով նոր գրքի հրատարակութեան մասին, հեղինակի հետևեալ յառաջաբանով. «Այստեղ ժողոված են միասին իմ այն բոլոր հետազօտութիւնները, որ առաջին անգամ լոյս տեսան Ռուսաստանում, «Вѣстникъ Европы» ամսագրում (Բալզակի, Ստէնդալի, Գուստավ Ֆլօբերի, Է. և Ժ. Գոնկուրների, Ա. Դոդէի, և ուրիշ նորագոյն բոմանիստների մասին)։ Այդ բոլորը գրված էր, այնու ամենայնիւ, մէկ ընդհանուր պրլանով։ Ես նպատակ ունէի այդ բոլորը մէկ հատորի մէջ միացնել, տալ, այդպիսով, նատուրալական շկոլայի մէկ ամբողջացրած պատմութիւն, ինչպէս էր նա կատարվում իր գլխաւոր ներկայացուցիչների ժամանակ, որոնք, մէկը միւսից յետոյ, առաջարկում և կերպարանափոխում էին նրա ձևակերպութիւնը։ Շատ կարելի է դեռ ես չեն մոռացել այն աղմուկը, որ պատճառեցին ժամանակակից վիպասանների մասին իմ հետազօտութիւնները, որ այժմ մոռած են հատորի վերջում։ Այժմ միայն այդ բոլորը իր իսկական միտքը և ճիշդ նշանակութիւն է ստանում։»

* * *

Փարիզի լրագիրներում, բելգիական քաղաքներից մէկի դատաստանական ժամանակագրութիւնից, պատմվում է թէ ինչպէս գիւղացիները սնապաշտութեամբ պատրաստվելիս են եղել մի կնոջ այրել։ Մօնս քաղաքի մօտ, մէկ գիւղում, խոնաւ խրթթում բնակվող մէկ գիւղացու երեխաները բոլորն էլ տիֆից մեռան. հայրը և մայրը դիմեցին կախարդին (համարեա իւրաքանչիւր գիւղը իր կախարդն ունի), խնդրելով ցոյց տալ, թէ ով է նրանց երեխաներին սպանում։ «Ով վաղը ձեզ մօտ առաջինը կը մտնի այրեցէք—դա է ձեր թշնամին»—պատասխանեց կախարդը։ Ծնողները դրսում առուտոդաֆէ շինեցին, և սպասում էին գոհին. մտաւ նրանց մօտ հարեան կինը, որը պաշտպանվելուց յետոյ, յաղթվեցաւ և գլորեցին նրան խարոյկի վրա։ Թշուառ կինը աղաչեց թոյլ տալ իրան խոստովանվել. ամուսինը ուղարկեց իր կնոջը քահանայի եկեղեցի, և այս, ի հարկէ, ազատեց թշուառին, որը միայն ծեծվելով ազատվեցաւ։ Յարգելով փաստաբանի խօսքերը, այն է, որ յանցաւորները իրանց զարգացմամբ փոքր են զանազանվում կենդանիներից, Մօնսի դատարանը մարդուն և կնոջը դատապարտեց կարճ ժամանակով բանտարկութեան և վճռեց 300 ֆրանկ վճարել իրանց պարզամիտ բարբարոսութեան զոհին։

* * *

Մադրիդը մեծ հանդիսով տօնեց երկու հարիւրամեայ յօբելեանը Կալդէրօն-դէ-լա-Բարկա բանաստեղծի, որ ծնվեցաւ Սպանիայի մայրաքաղաքում 1600 թ-ին և այնտեղ էլ մեռաւ 1681 թ-ին։ Տօնախմբութիւնները մէկ ամբողջ շաբաթ շարունակվեցան։ Ժողովուրդը անոպին խմբերով հաւաքվում էր Կալդէրօնի գերեզմանի վրա։ Առաջին երկու օրը նուիրված էր ակադեմիական և գրականական տօնախմբութիւններին, արուեստների թանգարանի բացմանը և նկարչութեան ու երկրագործութեան հանդէսներին։ Այդ ուրախութիւնների ամենալաւ բաժինը պատմական դնացքն էր, որ կազմված էր տասն և եօթերորդ դարի խիստ ճաշակով և նոյն ժամանակի շորերով։ Ազգային գվարդիայի հեծելազօրքի բաժինը դուրս եկաւ կէսօրից յետոյ մէկ ժամին Սերրանօ փողոցից, առաջ ունենալով ութ մունետիկներ, շատ չքեղ հագնված, կապոյտ նշանագլուխներով, գեղնագոյն վերնազգեստով, կարած ոսկով և մետաքսով. գլխի վրա դրած ունէին գլխարկներ à la Վան-Դիկ փետուրներով. ձեռքերում բռնած ունէին հին ալէբարդներ և գնում էին չքեղ կերպով զարդարված անդալուզեան ձիաներով։ Ապա հետևում էին հսկաները ահագին գլուխներով և գաճաճները Սարագոսից, Բիւրգոսից, Սանտանդէրից, Վալլադոլիդից։ Շարիւր մանկլաւիկներ տանում էին կայսերական դրօշակներ Կալդէրօնի զանազան դրամաների վերնագիրների վերագրերով։ Մադրիդի և գաւառների պատգամաւորներից իւրաքանչիւրը տանում էր իր դրօշակը. բոլոր դասակարգերի ներկայացուցիչները գնում էին կառքի առաջ, լծած տասն և ութ ձիաներ, որ ներկայացնում է Կալդէրօնի ապօթիէօզը։ Նրան հետևում էր վաճառականական դասակարգի կառքը, ութը ձիաներ լծած,—նա ներկայացնում էր յունական թատրոնը և առևտուրը. յետոյ «արուեստների զարգացման» կառքը, տասն և եօթերորդ դարի փայտեայ մամուլով, սպանիական մամուլի կառքը Գուտէնբէրգի արձանով և բազմաթիւ պակներ ի պատիւ Կալդէրօնի. նաւատորմի կառքը ներկայացնում էր մէկ նաւ, որի տախտակամածի վրա կանգնած էին նաւաստիները տասն և եօթերորդ դարի շորերով. գաղթականութիւնների կառքը ներկայացնում էր Ամերիկան և Հնդկաստանը Խրիստոֆոր Կոլումբոսի արձանով, Կալդէրօնի պատկերով և Հերքուլեսեան սիւներով. Մադրիդ քաղաքի գերասանների կառքը, պեռական խորհրդի կառքը. «ծաղիկների» կառքը, որ սփռում էին ծաղիկներ ամեն կողմեր ընթացքի բոլոր ժամանակը. վերջապէս սպանիական թագի ոսկրեայ կառքը, որը երբեմն պատկանում էր ժաննա անխելքին, այդ թագուհու վէնդէյներով. նրա ձիաները տանում էին ախոռապետները տասն և եօթերորդ դարի շորերով։ Այս հայակապ գնացքը անցաւ Մադրիդի բոլոր փողոցները։ Պատշգամբները և պատուհանները լցված էին հանդիսատեսներով, շինութիւնները զարդարված էին դրօշակներով և հին գործուածքներով։ 600-ից աւելի մարդիկ վեց ժամ շարունակ մասնակցում էին գնացքին։

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—ՂԱՐԱԳԼԻՍ. Երկաթ ասաղ։ Բաց նամակ էք գրում, բայց ազգանունը չէք ստորագրում։ Բաց նամակը նշանակութիւն չունի առանց ստորագրութեան։ Դրանից կարող ենք միայն թղթակցութիւն կազմել։

—ԹԻՖԼԻՍ. Կոռնոս. Չը կարողացանք տպել ձեր յօդուածները։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 յունիսի։ „Голосъ“ հաղորդում է որ վաղը երկու տեկինցիներ կը ներկայանան թագաւոր Կայսրին, որոնցից մինը Ավիզ-Կուլի Սարդար է, միւսը Կուլբատիր։ Նոյն լրագիրը հաղորդում է որ էկսպէդիտորների յանձնաժողովը գիւղացիների հողերը յետ գնելու փարձը պակասեցնելու համար, շուտով կը վերջացնի իր աշխատանքները։ Ինն միլիոն բուբլ գումարին, որ նշանակված է հողերը յետ գնելու համար, աւելացրած է դարձեալ երեք միլիոն բուբլ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 յունիսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր., երկրորդ 94 ր. 25 կ., երրորդ 94 ր. 50 կ., չորրորդ 94 ր. 50 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 225 ր. 75 կ., երկրորդ 219 ր., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92 ր. 87 կ., երկրորդ 92 ր. 75 կ., երրորդ 92 ր. 87 կ., ոսկի 8 ր. 11 կ.։ Ռուսաց 1 բուբլ Լօնդօնի վրա արժէ 24,75 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արաէ 210 մարկ 75 պֆ., Փարիզի վրա արժէ 258 ֆրանկ 50 սանտիմ։ Բօրսայի արտադրութիւնը ամուր է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ